

**ՀԱՆՐԱՅԻՆ ԳԼՈՒՄՆԵՐԻ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԵՐԸ ԱՃԽԱՐՀՈՒՄ ԵՎ ՀՀ-ՈՒՄ \***

ՀՏԴ 336.1

DOI: 10.52063/25792652-2023.3.18-205

**ԼՈՒԻԶԱ ՍԱՐԱՅՅԱՆ**

Հայաստանի պետական տնտեսագիտական  
համալսարանի հաշվապահական հաշվառման և աուդիտի  
ֆակուլտետի ֆինանսական հաշվառման ամբիոնի հայցորդ,  
ք. Երևան, Հայաստանի Հանրապետություն  
[luiza.asue.97@gmail.com](mailto:luiza.asue.97@gmail.com),  
ORCID: 0000-0002-4966-5076

Կարևորելով պետական ծախսերի կառավարման արդյունավետ համակարգի առկայությունը և բյուջետային գործընթացում կոռուպցիոն ռիսկերը նվազեցնելու անհրաժեշտությունը՝ հանրային ֆինանսների բնագավառում իրականացվող առանձին բարեփոխումներին զուգահեռ՝ 2000 թվականից սկսած Հայաստանի Հանրապետության իշխանությունները նախաձեռնել են հանրային հատվածում գնումների իրականացման միասնական և միջազգային չափանիշներին համապատասխանող համակարգի ներդրումը: Հանրային գնումների գործընթացը առավել կենտրոնացված և նպատակային իրականացնելու համար ՀՀ-ում ևս ըստ «Գնումների մասին» ՀՀ օրենքի՝ առանձնացվել են գնման հատուկ ընթացակարգեր՝ տարբեր տեսակի ապրանքների, աշխատանքների և ծառայությունների ձեռքբերման համար:

Հոդվածի նպատակն է ուսումնասիրել հանրային գնումների ընթացակարգերը ՀՀ-ում միջազգային փորձի վերլուծությամբ՝ վեր հանելու զարգացած երկրներում կիրառվող գնման ընթացակարգերի առավելությունները: Հոդվածի ուսումնասիրման խնդիրն է համեմատական վերլուծություն իրականացնել ՀՀ-ում հանրային գնումների տարբեր ընթացակարգերի միջև, բացահայտել դրանց առավելություններն ու թերությունները՝ համեմատելով այլ երկրների՝ մասնավորապես ԳԴՀ-ում և ԱՄՆ-ում կիրառվող հանրային գնումների ընթացակարգերի հետ:

Հոդվածում արծարծված խնդիրները լուծելու նպատակով կիրառվել են վերլուծության ուղղահայաց և համեմատական մեթոդները՝ ինչպես ՀՀ և արտասահմանյան երկրներում կիրառվող գնման ընթացակարգերի համեմատության, այնպես էլ ՀՀ-ում գործող տարբեր ընթացակարգերի առավելություններն ու թերությունները բացահայտելու համար:

Ամփոփելով հոդվածում կատարված ուսումնասիրությունները՝ հարկ է նշել, որ գնման ընթացակարգի ընտրությունը անմիջական ազդեցություն ունի հանրային գնումների գործընթացի թափանցիկ իրականացման և պետական բյուջեի միջոցների արդյունավետ օգտագործման վրա:

Հիմնաբառեր՝ հանրային գնումներ, ընթացակարգեր, ՀՀ, ԱՄՆ, ԳԴՀ, բաց և փակ մրցույթ, էլեկտրոնային աճուրդ, բանակցային ընթացակարգ:

\* Հոդվածը ներկայացվել է 14.07.2023թ., գրախոսվել՝ 10.09.2023թ., տպագրության ընդունվել՝ 31.10.2023թ.:

## Նախաբան

Հանրային գնումների ընթացակարգերը պետական ֆինանսների կառավարման ոլորտում մեծ ազդեցություն ունեն գնումների գործընթացի թափանցիկության ապահովման վրա: Աշխարհում գնման ընթացակարգի ընտրության ձևից կախված հիմնավորվում է տվյալ երկրում հանրային գնումների քաղաքականության արդյունավետ իրականացումը:

Գնումների քաղաքականության իրականացման համար տարբեր երկրներում, բացի գործընթացը կարգավորող հանընդհանուր կանոնակարգերից, կիրառվում են լրկալ օրենսդրական առանձնահատկություններ:

Անդրադառնանք ՀՀ-ում, ԵՄ անդամ ԳԴՀ-ում և ԱՄՆ-ում գործող գնման ընթացակարգերին՝ ելնելով տվյալ երկրի գնումների ոլորտը կարգավորող իրավական ակտերից:

ԵՄ անդամ բոլոր երկրներում կիրառվում են գնման նույն ընթացակարգերը՝ ելնելով գնման միօրինակ որդեգրված քաղաքականությունից և գնումների ոլորտը կարգավորող կանոնակարգերից, իսկ ԱՄՆ-ում ընթացակարգերը փոքր-ինչ այլ են՝ կապված գնումների ոլորտը կարգավորող դաշնային կանոնակարգի կիրառման հետ: ՀՀ-ում գնման ընթացակարգերը միօրինակ են ԵԱՏՄ անդամ երկրների հետ, սակայն կիրառվում են նաև լրկալ օրենսդրական ակտեր՝ կապված գնումների գործընթացի իրականացման և գնման առանձին ընթացակարգերի հետ:

### ԳԴՀ-ում կիրառվող գնման ընթացակարգերը

ԵՄ անդամ բոլոր երկրներում գնման ընթացակարգերը նույնն են, դրանք կարող են տարբերվել միայն մրցութային ընթացակարգերի ժամանակ կիրառվող բազային շեմերի մասով, սակայն գնման գործընթացի կազմակերպման սկզբունքները և ընթացակարգերը համընդհանուր են: Ուստի ելնելով տվյալների առավել հակիրճ ներկայացման նպատակահարմարությունից՝ դիտարկենք միայն ԳԴՀ-ում կիրառվող ընթացակարգերը:

Գերմանիայում գնման ընթացակարգերը հետևյալն են (ԳԴՀ Տնտեսական հարցերի նախարարության պաշտոնական կայքէջ, 30.05.23)՝

- Բաց մրցույթ: Այս ընթացակարգով ցանկացած շահագրգիռ ընկերություն կարող է հայտ ներկայացնել: Գնումների գործընթացը բաց է բոլորի համար, և այն հրապարակվում է բաց ընթացակարգով բոլոր կազմակերպությունների համար:

- Փակ մրցույթ կամ սահմանափակ մրցութային ընթացակարգ: Այս դեպքում մրցույթն իրականացվում է երկու փուլով՝ նախաորակավորման ընթացակարգի կիրառմամբ: Նախաորակավորման փուլից հետո միայն արդեն իսկ վերոնշյալ փուլը հաղթահարած մասնակիցները կարող են ներկայացնել հայտ (գնային առաջարկ)՝ վերջնական մրցույթին մասնակցելու համար:

- Բանակցային ընթացակարգ: Այս դեպքում պատվիրատու հանդիսացող կազմակերպությունը բանակցում է մեկ կամ մի քանի ընկերությունների հետ գնիչեցման հետ կապված՝ նվազագույն գնային առաջարկը որոշելու համար:

- Մրցակցային երկխոսության ընթացակարգ: Այս դեպքում պատվիրատու հանդիսացող կազմակերպությունը երկխոսություն է վարում հայտատուների հետ՝ գնման պրոցեսի լավագույն լուծումը գտնելու համար, որը, սակայն, միայն կապված չէ գնային առաջարկի հետ:

- Նորարարական ընթացակարգ: Այս դեպքում երկխոսություն է իրականացվում նորարարական ապրանքների կամ ծառայությունների գաղափարների մշակման համար:

Ընդհանրապես մրցութային ընթացակարգը միտված է պետական բյուջեի միջոցների արդյունավետ օգտագործմանը, ուստի այստեղ առաջնահերթությունը

տրվում է ցածր գնային առաջարկին: Սակայն հայտում պարունակվող գնային առաջարկը կազմելիս հաշվի են առնվում նաև ոչ գնային գործոնները:

### **ԱՄՆ-ում կիրառվող գնման ընթացակարգերը**

ԱՄՆ-ը, որպես զարգացած և պետական կառավարման առումով առանձնահատուկ երկիր, գնման գործընթացի կազմակերպման և կիրառվող ընթացակարգերի առումով տարբերվում է ԵՄ անդամ պետություններից:

ԱՄՆ-ում Առաջնային օրենսդրական ակտը, որը կարգավորում է պետական գնումները, դրանց իրականացման ընթացակարգերը, Դաշնային ձեռքբերումների կանոնակարգն է (FAR-Federal Acquisition Regulation): Օրենսդրական ակտը կարգավորում է հանրային գնումներին առնչվող թեմաների լայն շրջանակ՝ ներառյալ գնումների պլանավորումը, պայմանագրերի ձևավորումը, պայմանագրերի նկատմամբ հսկողությունը, պայմանագրերի կատարման արդյունքների կառավարումը: Այն ներառում է նաև մրցակցության, փոքր բիզնեսի՝ հանրային գնումների ընթացակարգերին մասնակցության պահանջներն ու պայմանները:

Պետական և տեղական ինքնակառավարման մակարդակում կան մի շարք օրենքներ ու կանոնակարգեր, որոնք կարգավորում են հանրային գնումների իրականացման գործընթացը: Այս օրենքներն ու կանոնակարգերը տարբերվում են ամերիկյան տարբեր նահանգներում, սակայն դրանք սովորաբար ներառում են մրցակցության, թափանցիկության և հայտատուների նկատմամբ արդար ու հավասար իրավունքների գործադրման նմանատիպ պահանջներ:

Ի լրումն FAR-ի և՛ նահանգային, և՛ տեղական օրենքների և կանոնակարգերի՝ կան նաև այլ դաշնային օրենքներ ու կանոնակարգեր, որոնք վերաբերում են հանրային գնումներին. մասնավորապես կան այնպիսի իրավական ակտեր, որոնցով սահմանափակվում են որոշակի ապրանքների ու ծառայությունների ձեռքբերումը այլ երկրներից և խրախուսվում է հայրենական արտադրանքի թողարկումը (ԱՄՆ դաշնային գնումները կարգավորող օրենսդրության պաշտոնական կայքէջ, 20.04.23):

Համաձայն ԱՄՆ-ում դաշնային ձեռքբերումների կանոնակարգի՝ առանձնացվում են հետևյալ հիմնական մրցության գնման ընթացակարգերը՝

- Կնքված հայտերի (սակարկությունների) ընթացակարգ,
- Մրցակցային առաջարկներ,
- Մրցակցային ընթացակարգերի համադրում, երբ համադրվում են կնքված հայտերի և մրցակցային առաջարկների ընթացակարգերը: Վերջինս կիրառվում է վերոնշյալ երկու ընթացակարգերի առանձին իրականացվելու անհնարինությունից ելնելով:
- Մրցության ընթացակարգեր՝ ինժեներական, ճարտարապետական բնույթի ծառայություններ ձեռքբերելու համար:
- Բանակցային ընթացակարգ:

*Կնքված հայտերի (սակարկությունների) ընթացակարգը* կիրառվում է այն պարագայում, երբ հայտերի գնահատումը հիմնված է միայն գնի և այլ գնային գործոնների վրա: Վերջինս ընտրելու պարագայում թույլատրվում է հայտերի միջև մրցություն, բացի այդ, տվյալ ընթացակարգով ձեռք են բերվում այնպիսի ապրանքներ, ծառայություններ և աշխատանքներ, որոնց առաջարկողները մեկից ավելի հայտատուներ են: Սակայն ընթացակարգի թերությունն այն է, որ հայտերը գնահատվում են միայն նվազագույն գնային առաջարկով՝ անտեսելով որակական բնութագրերը:

*Բանակցային ընթացակարգը* իր հերթին հանդես է գալիս մեկ անձից գնման և մրցության ընթացակարգով: Մեկ անձից գնման ընթացակարգը կիրառվում է այն պարագայում, երբ ձեռքբերվող ապրանքը, ծառայությունը կամ աշխատանքը կարող է գնվել միայն մեկ աղբյուրից, այլ հայտատուներ չեն կարող առաջարկել նմանատիպ

ապրանքներ ու ծառայություններ. այս դեպքում գնային գործոնի առաջնահերթությունը հետ է մղվում:

Իսկ մրցութային ընթացակարգը կիրառվում է այն դեպքում, երբ կարող են ի հայտ գալ տվյալ մրցույթի մեկից ավելի հայտատուներ՝ առաջարկելով որակապես նմանատիպ ապրանքներ, սակայն մրցակցությունը վերջինիս դեպքում հիմնվում է ցածր գնային առաջարկի վրա՝ գերակշռելով ապրանքի կամ ծառայության որակական բնութագրերին:

*Փոխզիջման/tradeoff/գործընթացը*, ըստ ձեռքբերումների դաշնային կանոնակարգի, պաշտոնապես չի հանդիսանում գնման ընթացակարգ, սակայն կիրառվում է այն պարագայում, երբ պետական շահի առաջնահերթությունից ելնելով՝ անտեսվում է ձեռքբերվող ապրանքի կամ ծառայության որակական հագեցվածությունը կամ ֆինանսապես առավել ձեռնտու ցածր գնային առաջարկը: Այս պարագայում պատվիրատուի կողմից կազմվող հրավերը պետք է հստակ նախանշի այն բոլոր չափանիշները, ըստ որի՝ կազմակերպվել է փոխզիջման ընթացակարգը, մասնավորապես պետք է հիմնավորվեն կատարվելիք լրացուցիչ ծախսերը պահանջվող ապրանքը կամ ծառայությունը ձեռքբերելու համար, կամ պետք է հիմնավորվի որակական կարևորությունը ավելին, քան գնային առաջարկն է (ԱՄՆ դաշնային գնումները կարգավորող օրենսդրության պաշտոնական կայքէջ, 20.04.23):

Հատկանշական է, որ և՛ Գերմանիայում, և՛ ԱՄՆ-ում, ինչպես նաև մի շարք եվրոպական երկրներում բանակցային ընթացակարգը ներկայացվում է որպես առանձին ընթացակարգ, մինչդեռ ՀՀ-ում, ըստ «Գնումների մասին» ՀՀ օրենքի, բանակցությունը չի հանդիսանում առանձին գնման ընթացակարգ:

Անդրադառնալով ՀՀ-ում կիրառվող գնման ընթացակարգերին:

**Հանրային գնումների ընթացակարգերը ՀՀ-ում**

ՀՀ-ում գնման ընթացակարգերը նույնն են, ինչ ԵԱՏՄ անդամ պետություններում:

Ըստ «Գնումների մասին» ՀՀ օրենքի՝ գնման ընթացակարգերը ՀՀ-ում հետևյալն են («Գնումների մասին» ՀՀ օրենք, հոդված 18)՝

- Էլեկտրոնային աճուրդը,
- մրցույթը,
- գնանշման հարցումը,
- մեկ անձից գնումը:

*Մեկ անձից* գնման ընթացակարգը կիրառվում է հեղինակային և հարակից բացառիկ իրավունքների առկայության դեպքում, այսինքն՝ երբ ընթացակարգին կարող է մասնակցել մեկ անձ, ով ունի տվյալ ապրանքը մատակարարելու կամ ծառայությունը մատուցելու բացառիկ իրավունք: Բացի այդ, երբ ծագել է անհետաձգելի գնման պահանջ, այս պարագայում ևս մրցութային այլ ընթացակարգերի ժամկետները պահպանելու անհնարինության հետ կապված՝ կարող է կիրառվել մեկ անձից գնման ընթացակարգը: Ամենագլխավոր պայմանը, որի դեպքում կիրառվում է մեկ անձից գնման ընթացակարգը և առավել վերահսկելի է պետության կողմից, դա գնման բազային միավորը չգերազանցելու դեպքում կատարվող գնումներն են (գնումների բազային միավորը մեկ միլիոն ՀՀ դրամն է) («Գնումների մասին» ՀՀ օրենք, հոդված 2):

*Գնանշման հարցման ձևով գնումները* կարող են իրականացվել այն պարագայում, երբ գնման գինը չի գերազանցում գնումների բազային միավորի ութսունապատիկը, ինչպես նաև գնվող առարկան ներառված չէ Էլեկտրոնային աճուրդով ձեռքբերվող ապրանքների ցանկում:

Պետական գաղտնիք պարունակող գնումների դեպքում կարող է կիրառվել գնանշման հարցման ընթացակարգը, եթե նախապես կիրառվի նախաորակավորման ընթացակարգ: Նախաորակավորման ընթացակարգին կարող է մասնակցել ցանկացած մասնակից: Սակայն պետական գաղտնիք պարունակող գնումների իրականացման պարագայում նախաորակավորման ընթացակարգից հետո հայտ կարող են ներկայացնել միայն պատվիրատուից հրավեր ստացած մասնակիցները:

Ընդհանուր առմամբ, գնումների բոլոր ընթացակարգերը նախընտրելի են, քանի որ դրանք սահմանվում են օրենքով, սակայն առավել նպատակահարմար գնման ընթացակարգ հանդիսանում է մրցույթը, որը կարող է լինել բաց և փակ և իրականացվել երկու փուլով:

Վերլուծելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի առանձնահատկությունները՝ կարող ենք նշել, որ գնանշման հարցման ընթացակարգը միջանկյալ օղակ է հանդիսանում մեկ անձից գնման և մրցութային ընթացակարգերի մեջ, քանի որ մրցութային ընթացակարգը հիմնականում կիրառվում է գնման բազային միավորի ութսունապատիկը գերազանցելու պարագայում, իսկ գնանշման հարցումը՝ գնման բազային միավորը գերազանցելու, սակայն ութսունապատիկը չգերազանցելու պարագայում:

*Փակ և բաց մրցույթների* հիմնական տարբերությունն այն է, որ փակ մրցութային ընթացակարգը կիրառվում է պետական գաղտնիք պարունակող գնումների դեպքում: Պետական գաղտնիք պարունակող գնումների ցանկը հաստատում է Կառավարությունը: Վերջիններս հիմնականում կատարվում են ՀՀ Պաշտպանության նախարարության կարիքների բավարարման համար:

Փակ մրցույթը իր հերթին կարող է լինել պարբերական և նպատակային: Փակ մրցույթը պարբերական է, եթե գնումը իրականացվում է պարբերաբար, և նպատակային է այն պարագայում, երբ գնվող ապրանքը ներառված չէ Կառավարության կողմից սահմանված ցանկում:

Մրցույթը կարող է կատարվել երկու փուլով («Գնումների մասին» ՀՀ օրենք, հոդված 19)՝

1. եթե պատվիրատուն ճշգրիտ (օբյեկտիվորեն) չի կարող օրենքի պահանջներին համապատասխան սահմանել գնման առարկայի բնութագրերը,
2. եթե պատվիրատուն հնարավորություն է տալիս մասնակիցներին ներկայացնել գնման առարկայի հնարավոր բնութագրերի վերաբերյալ այլընտրանքային առաջարկներ,
3. եթե գնման առարկայի բնութագրերի որոշ առանձնահատկություններ հստակեցնելու նպատակով մասնակիցների հետ բանակցելու անհրաժեշտություն է առաջացել:

Էլեկտրոնային աճուրդի իրականացման ընթացակարգը կիրառվում է Կառավարության կողմից սահմանված էլեկտրոնային աճուրդով ձեռքբերվելիք ապրանքների, ծառայությունների և աշխատանքների գնման դեպքում:

Աճուրդի տևողությունը սահմանվում է 30 րոպե: Աճուրդի ընթացքում կատարվող յուրաքանչյուր քայլի արդյունքում նվազեցվող գումարը չպետք է պակաս լինի աճուրդը սկսելու պահին ներկայացված նվազագույն գնային առաջարկի մեկ տոկոսից: Եթե աճուրդի ընդհանուր տևողության ընթացքում որևէ քայլ կատարելու պահից հաշված 5-րդ րոպեն լրանալը չի կատարվում նոր քայլ, ապա աճուրդը համարվում է ամփոփված, և վերջին քայլը կատարած մասնակիցը համարվում է առաջին տեղը զբաղեցրած մասնակից («Էլեկտրոնային աճուրդի իրականացման կարգը և էլեկտրոնային աճուրդի միջոցով ձեռքբերվող ապրանքների, աշխատանքների և ծառայությունների ցանկը հաստատելու մասին» ՀՀ Կառավարության որոշում):

Այժմ աղյուսակով ներկայացնենք ՀՀ-ում կիրառվող գնման ընթացակարգերի տարբերակիչ առանձնահատկությունները:

Աղյուսակ 1. Գնման ընթացակարգերի տարբերակիչ առանձնահատկությունները ՀՀ-ում:

Գնման ընթացակարգը	Մասնակիցների կողմից հայտերի ներկայացման ժամկետը	Գնման կիրառվող բազային միավորը	Կիրառման առանձնահատկությունները
1. Մեկ անձից գնում	<p>հայտերի ներկայացման ժամկետը սահմանվում է ոչ շուտ, քան հրավերն ուղարկվելու օրվանից երկու և ոչ ուշ քան հինգ աշխատանքային օր («Գնումների գործընթացի կազմակերպման կարգը հաստատելու և ՀՀ Կառավարության 2011թ. փետրվարի 10-ի 168-Ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» ՀՀ Կառավարության որոշում</p>	<p>Մինչև գնումների բազային միավորը՝ 1 մլն ՀՀ դրամ</p>	<p>1. Կիրառվում է հրատապ գնումների դեպքում, առանձնահատուկ պարանքների կամ ծառայությունների պարագայում, երբ պարանք կամ ծառայություն առաջարկողը մեկն է կամ սակաթիվ են:</p> <p>2. Եթե կնքվելիք պայմանագրի գինը չի գերազանցում գնումների բազային միավորի կեսը և այն ենթակա է կատարման կնքման պահին, ապա գրավոր պայմանագրի կնքումը պարտադիր չէ, և գործարքը կարող է կատարվել Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ նախատեսված այլ փաստաթղթերի (հաշիվ-ապրանքագիր և այլն) հիման վրա:</p> <p>3. Պայմանագրի ապահովում չի ներկայացվում:</p> <p>4. Ներկայացվում է միայն գնային առաջարկ:</p>
2. Գնանշման հարցում	<p>Հայտի ներկայացման ժամկետը սահմանվում է 7-15 օրացուցային օր</p>	<p>Գնումների բազային միավորը գերազանցելու դեպքում</p>	<p>1. Իրականացվում է գնումների բազային միավորը գերազանցելու, սակայն յոթանասունապատիկը չգերազանցելու դեպքում:</p>
3. Մրցույթ	<p>Բաց մրցույթի պարագայում թղթային տարբերակով իրականացվող գնումների դեպքում՝ 40 օրացուցային օր, էլեկտրոնային տարբերակով իրականացման դեպքում՝ 30 օրացուցային օր:</p>	<p>Բազային միավորի յոթանասունապատիկը գերազանցելու դեպքում :</p>	<p>1. Իրականացվում է բաց և փակ մրցույթի ձևով:</p> <p>2. Փակ մրցույթի ընթացակարգը կիրառվում է պետական գաղտնիք պարունակող գնումների դեպքում: Փակ մրցույթը պարբերական է, եթե այն իրականացվում է պարբերաբար և եթե գնվելիք ապրանքը կամ ծառայությունը ներառված է փակ պարբերական մրցույթով ձեռքբերվող ապրանքների և ծառայությունների ցուցակում, և նպատակային է, եթե վերջինս ներառված չէ վերոնշյալ ցուցակում («Գնումների մասին» ՀՀ օրենք, հոդված 21):</p> <p>3. Բաց մրցույթը մրցութային ընթացակարգերից առավել նախատրեյի և ցանկայի ընթացակարգ է, կարող է կիրառվել</p>

			<p>ցանկացած գնման պարագայում, բացառությամբ վերոնշյալ երկրորդ կետի, իսկ սահմանափակող գործոնը, որով այն տարբերվում է գնանշման հարցման ընթացակարգից, գնման բազային միավորն է:</p>
<p>4. Էլեկտրոնային աճուրդ</p>	<p>Առնվազն 15 օրացուցային օր</p>	<p>Գնման բազային միավոր չի սահմանվում. ընթացակարգը կիրառվում է կախված ձեռքբերվելիք ապրանքի, աշխատանքի, ծառայության տեսակից:</p>	<p>1. Տևողությունը 30 րոպե է:                  2. Յուրաքանչյուր հաջորդ քայլը կատարելու դեպքում գնային առաջարկը թի կարող նվազեցվել աճուրդի պահին գործող գնային առաջարկի 1 տոկոսից:                  3. Նվազագույն գնային առաջարկ ներկայացրած մասնակցի հայտը գնահատվում է բավարար, սակայն հայտերի գնահատման արդյունքում հայտի մերժման պարագայում ընթացակարգը համարվում է չկայացած:                  4. Աճուրդն ամփոփվելու պահի դրությամբ համակարգն ավտոմատ եղանակով պատվիրատուին և հայտեր ներկայացրած մասնակիցներին ներկայացնում է աճուրդի արդյունքները՝ ըստ առաջին և հաջորդաբար տեղեր զբաղեցրած մասնակիցների անվանումների և զբաղեցրած տեղերի:</p>


Հատկանշական է, որ եթե Էլեկտրոնային աճուրդով ձեռքբերվելիք գնման առարկայի արժեքը չի գերազանցում գնումների բազային միավորը, ապա գնումը կարող է կազմակերպվել՝ կիրառելով մեկ անձից գնման ընթացակարգը, սակայն բազային միավորը գերազանցելու դեպքում բացառապես կիրառվում է Էլեկտրոնային աճուրդի ընթացակարգը:

Այսպիսով՝ ըստ օրենսդրության՝ գնման բոլոր ընթացակարգերը կիրառելի են՝ Նախապատվությունը սակայն տալով մրցութային ընթացակարգին:

Այլ է պատկերը իրականում՝ օրենսդրական շրջանակներից դուրս: Անդրադառնալով ՀՀ-ում կիրառվող գնման ընթացակարգերին և պատվիրատուների Նախընտրություններին:

**Գծապատկեր 1. Հանրային գնումների պայմանագրերի մեծությունների տեսակարար կշիռները՝ ըստ գնման տարբեր ընթացակարգերի:**

**ՀՀ-ում գնման տարբեր ընթացակարգերի արդյունքում կնքված պայմանագրերի քանակը 2018-2022թթ. ընթացքում տոկոսային համամասնությամբ**



Ինչպես տեսնում ենք գծապատկերից, մեկ անձից գնման ընթացակարգով կնքված պայմանագրերի քանակը նվազել է 2019 թվականին 2018 թվականի համեմատ, աճել է 2020 թվականին, որից հետո կրկին նվազել է 2021 թվականին, իսկ 2022 թվականին դարձել է 29,2 տոկոս բոլոր կնքված պայմանագրերի շրջանակում: Մինևույն ժամանակ պետք է նկատել, որ բաց մրցույթի արդյունքում կնքված պայմանագրերի քանակը, չնայած առավել նախընտրելի ընթացակարգ համարվելու հանգամանքի, 2022թ. կազմել է ընդամենը 23.4 տոկոս:

Ի հակադրություն վերոնշյալի՝ տեսնում ենք, որ բավականաչափ մեծ ծավալով կիրառվել է հրատապ բաց մրցույթի ընթացակարգը: Այս ընթացակարգը իրականացման բնույթով և կիրարկմամբ համապատասխանում է մեկ անձից գնման և բաց մրցույթի ընթացակարգերին, միակ տարբերությունը կապված է կարիքի հրատապությամբ պայմանավորված հայտերի ներկայացման ավելի կարճ ժամկետների կիրառման հետ: Սակայն այս պարագայում խիստ կարևոր է կարիքի հրատապության հիմնավորումը:


Ելնելով միջազգային փորձի ուսումնասիրությունից՝ տեսնում ենք, որ որպես այդպիսին՝ ՀՀ-ում առանձնացված չի կիրառվում բանակցային ընթացակարգը, ինչպես նաև նորարարական ապրանքների և ծառայությունների ձեռքբերման համար նախատեսված գնումների ընթացակարգը: Փոխարենը նախապատվություն է տրվում գործող ընթացակարգերից մեկ անձից գնման ընթացակարգին, որն ռիսկեր է պարունակում կապված վերահսկողության կիրառման դժվարության հետ, ինչպես նաև մրցույթային ընթացակարգին ոչ լիարժեք և հիմնավոր այլընտրանք լինելու հետ:

Գերմանիայի Դաշնային Հանրապետության վիճակագրական ծառայության տվյալների ուսումնասիրությունից պարզ է դառնում, որ տարբեր գերատեսչական մարմինների կողմից կնքված պայմանագրերում գնալով մեծանում է բաց մրցույթային ընթացակարգի արդյունքում կնքվող պայմանագրերի քանակը. ի մասնավորի նշենք, որ, օրինակ, 2021 թվականին պատվիրատու հանդիսացող գերատեսչական մարմինների կողմից բաց մրցույթային ընթացակարգով կնքված պայմանագրերի քանակը կնքված ընդհանուր պայմանագրերի մեջ կազմել է 55,2 տոկոս, բանակցային ընթացակարգի արդյունքում կնքված պայմանագրերի քանակը՝ 29 տոկոս, իսկ մրցակցային երկխոսությամբ և գնման այլ ընթացակարգերով կնքված պայմանագրերի քանակը՝ 15,8 տոկոս (ԳԴՀ Ազգային Վիճակագրական ծառայության պաշտոնական կայքէջ, 20.06.23):



**Գծապատկեր 2. 2021թ.ԳԳՀ-ում գնման տարբեր ընթացակարգերի արդյունքում կնքված պայմանագրերի քանակը**

2021թ.ԳԳՀ-ում գնման տարբեր ընթացակարգերի արդյունքում կնքված պայմանագրերի քանակը



- Բաց մրցութային ընթացակարգի արդյունքում կնքված պայմանագրեր
- Բանակցային ընթացակարգի արդյունքում կնքված պայմանագրեր
- Մրցակցային երկիտության և գնման այլ ընթացակարգերի արդյունքում կնքված պայմանագրեր

Պատկերը գրեթե նույնն է նաև ԱՄՆ-ում. կնքված պայմանագրերի 60 տոկոսից ավելին բաժին է ընկնում բաց մրցութային ընթացակարգերին, 35 տոկոսը՝ բազային միավորի առումով առավել փոքրածավալ գնումներին, իսկ 5 տոկոսը՝ այլ մրցութային ընթացակարգերին (ԱՄՆ Կառավարության պաշտոնական կայքէջ, 01.07.23):

**Գծապատկեր 3. 2021թ.ԱՄՆ-ում մրցութային տարբեր ընթացակարգերի արդյունքում կնքված պայմանագրերի քանակը տոկոսային համամասնությամբ**

2021թ.ԱՄՆ-ում մրցութային տարբեր ընթացակարգերի արդյունքում կնքված պայմանագրերի քանակը տոկոսային համամասնությամբ



- Բաց մրցութային ընթացակարգի արդյունքում կնքված պայմանագրերի քանակ
- Գնման բազային միավորի առումով առավել փոքրածավալ գնումների մրցութային ընթացակարգով
- Գնման այլ ընթացակարգերի արդյունքում կնքված պայմանագրերի քանակ

Այս ամենից ելնելով՝ կարող ենք եզրակացնել, որ ինչքան երկիրն ավելի զարգացած է, հանրային գնումների ոլորտում թափանցիկությունն ապահովելու համար կիրառվում է օրենքով սահմանված, առավել նախընտրելի բաց մրցութային ընթացակարգը:

**Եզրակացություն**

Ելնելով հոդվածում կատարված վերլուծություններից՝ հանգում ենք այն եզրակացության, որ հանրային գնումների գործընթացը թափանցիկ իրականացնելու և պետական ֆինանսները արդյունավետ կառավարելու նպատակով անհրաժեշտ է ճշգրիտ ընտրել գնման ընթացակարգը:

Գնման ընթացակարգի ընտրությունը ազդեցություն է ունենում ոչ միայն պատվիրատու, այլև գնումների գործընթացին մասնակից հանդիսացող կազմակերպությունների վրա, քանի որ առավել նախընտրելի հանդիսացող մրցութային ընթացակարգում գնումների պլանավորման և պայմանագրերի կնքման գործընթացը առավել մեծ փաստաթղթաշրջանառություն է պարունակում, քան մեկ անձից գնման ընթացակարգի կիրառման դեպքում, բացի այդ, մրցութային ընթացակարգին առավել մեծ թվով մասնակիցների առկայության պարագայում առավել արդյունավետ է գնային առաջարկի, ինչու չէ նաև որակապես առավել բարձր ապրանքների և ծառայությունների գնումը:

Իսկ փաստաթղթաշրջանառության ապահովումը իր հերթին առավել հիմնավոր է դարձնում գնման գործընթացը:

Հողվածում անդրադարձ է կատարվել նաև ԳԴՀ-ում և ԱՄՆ-ում կիրառվող գնման ընթացակարգերին, ինչպես նաև դրանց կիրառմանը՝ պայմանավորված կնքված պայմանագրերի քանակով, և արդյունքում ստացվում է, որ առավել զարգացած երկրներում գնման ընթացակարգերի մեջ առավել մեծ տեսակարար կշիռ ունի մրցութային ընթացակարգը՝ ի տարբերություն ՀՀ-ի, որտեղ դեռևս մրցութային ընթացակարգը իր տեղը զիջում է մեկ անձից գնման և այլ ընթացակարգերին, սակայն դրականն այն է, որ վերջին տարիներին՝ հատկապես 2021-2022թթ. ընկած ժամանակահատվածում, մեկ անձից գնումը սկսում է զիջել իր տեղը կամ առնվազն հավասարվել մրցութային ընթացակարգերին: Այս միտումը դրական ազդեցություն կարող է ունենալ նաև կոռուպցիոն ռիսկերի նվազեցման վրա:

Ուսումնասիրելով զարգացած երկրների առաջավոր փորձը՝ համոզվում ենք, որ պետության կողմից կատարվող ծախսերը օպտիմալացնելու համար առավել մեծ ուշադրություն պետք է դարձնել գնման գործընթացի սկզբունքների հստակ կիրառմանը, որը կարող է ապահովվել միայն ճշգրիտ ընթացակարգի ընտրության միջոցով:

### ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. ԱՄՆ դաշնային գնումները կարգավորող օրենսդրության պաշտոնական կայքէջ, մուտքի ամսաթիվ 20.04.2023թ., <https://www.acquisition.gov/browse/index/far>
2. ԱՄՆ Կառավարության պաշտոնական կայքէջ, <https://sam.gov/reports/awards/static>, մուտքի ամսաթիվ 01.07.2023թ.
3. ԳԴՀ Ազգային Վիճակագրական ծառայության պաշտոնական կայքէջ, <https://www.genesis.destatis.de/genesis/online?operation=previous&levelindex=1&step=1&titel=Result&levelid=1689017477156&acceptscookies=false#breadcrumb>, մուտքի ամսաթիվ 20.06.2023թ.
4. ԳԴՀ Տնտեսական հարցերի նախարարության պաշտոնական կայքէջ, մուտքի ամսաթիվ 30.05.23, <https://www.bmwk.de/Redaktion/EN/Dossier/public-procurement.html>
5. ՀՀ Ազգային ժողով. «Գնումների մասին» օրենք. 16 դեկտեմբեր 2016, <https://www.arlis.am/documentview.aspx?docID=110820>
6. ՀՀ Կառավարություն, N 137-Ն որոշում. 26 հունվարի 2006. «Էլեկտրոնային գնումների համակարգի ներդրման ռազմավարությունը հաստատելու մասին», <https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=14388>
7. ՀՀ Կառավարություն, N 534-Ն որոշում, 18 մայիս 2017. «Էլեկտրոնային աճուրդի իրականացման կարգը և Էլեկտրոնային աճուրդի միջոցով ձեռքբերվող ապրանքների, աշխատանքների և ծառայությունների ցանկը հաստատելու մասին», <https://www.arlis.am/documentview.aspx?docID=138560>,
8. ՀՀ Կառավարություն, N 526-Ն որոշում 4 մայիսի 2017. «Գնումների գործընթացի կազմակերպման կարգը հաստատելու և ՀՀ Կառավարության

2011թ.փետրվարի 10-ի 168-Ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին»,  
<https://www.arlis.am/documentview.aspx?docid=113367>

### WORKS CITED

1. AMN dashnayin gnumner' kargavorogh o'rensdruz'tyan pashtonakan kayqe'j [Official Website of the US Legislation Regulating Federal Procurement], mutqi amsat'iv 20.04.2023 (in Armenian)
2. AMN Kar'avarut'yan pashtonakan kayqe'j [Official Website of the US Government], mutqi amsat'iv 01.07.2023(in Armenian)
3. GDH Azgayin Vitwakagrakan c'ar'ayut'yan pashtonakan kayqe'j [Official Website of the National Statistical Service of Germany]. (in Armenian)
4. GDH Tntesakan harceri naxararut'yan pashtonakan kayqe'j [Official Website of the Ministry of Economy of Germany], mutqi amsat'iv 30.05.23. (in Armenian)
5. HH Azgayin jhoghov. «Gnumneri masin» o'renq. 16 dektember 2016, [The Law of the Republic of Armenia on purchases]. (in Armenian)
6. HH Kar'avarut'yun, N 137-N oroshum.26 hunvari 2006. «E'lektronayin gnumneri hamakargi nerdman r'azmavarut'yuny' hastatelu masin», [Decision of the Government of the Republic of Armenia on Approving the Implementation Strategy of the Electronic Procurement System]. (in Armenian)
7. HH Kar'avarut'yun, N 534-N oroshum, 18 mayis 2017. «E'lektronayin atwurd i rakanacman kargy' ev e'lektronayin atwurd mijocov d'er'qbervogh apranqneri, ashxatanqneri ev c'ar'ayut'yunneri canky' hastatelu masin» [Decision of the Government of the Republic of Armenia on the Procedure for the Implementation of the Electronic Auction and the Approval of the List of Goods, Works and Services Purchased through the Electronic Auction] (in Armenian)
8. HH Kar'avarut'yun, N 526-N oroshum 4 mayisi 2017.«Gnumneri gorc'y'nt'aci kazmakerpman kargy' hastatelu ev HH Kar'avarut'yan 2011t'.p'etrvari 10-i 168-N oroshumn ujhy' korcrac' twanachelu masin» [Decision of the RA Government on Approving the Procedure for Organizing the Procurement Process and Revoking RA Government's Decision 168-N of February 10, 2011] (in Armenian)

## PUBLIC PROCUREMENT PROCEDURES WORLDWIDE AND IN RA

**LUIZA SARAFYAN**

*Armenian State University of Economics, Faculty of Accounting and Auditing,  
 Chair of Financial Accounting, Ph.D.Student  
 Yerevan, the Republic of Armenia*

Emphasizing the existence of an effective public expenditure management system and the need to reduce corruption risks in the budget process, in parallel with certain reforms carried out in the field of public finance, since 2000 the authorities of the Republic of Armenia have initiated the introduction of a unified public sector procurement system that meets international standards.

For a more purposeful implementation of the public procurement process in the RA, in accordance with the RA Law “On Procurement”, special procurement procedures have been established for the purchase of various types of goods, works and services.

The purpose of the article is to study the public procurement procedures in the Republic of Armenia with an analysis of international experience, to highlight the advantages of the procurement procedures used in developed countries. The objective of

the work is to conduct a comparative analysis between various public procurement procedures in the Republic of Armenia, identify their advantages and disadvantages by comparing them with other countries, in particular with the FRG, and with the public procurement procedures used in the United States.

To solve the problems discussed in the article, vertical and comparative analysis methods were used to compare the procurement procedures used in the RA and foreign countries, as well as to identify the advantages and disadvantages of various procedures in the RA.

Summarizing the research conducted in the article, it should be noted that the choice of the procurement procedure has a direct impact on the transparency of the public procurement process and the efficient use of state budget funds.

**Keywords:** *public procurement, procedures, RA, USA, FRG, open and closed tender, electronic auction, negotiation procedure.*

## ПРОЦЕДУРЫ ГОСУДАРСТВЕННЫХ ЗАКУПОК В МИРЕ И В РА

ЛУИЗА САРАФЯН

*соискатель кафедры финансового учета факультета бухгалтерского учета и аудита Армянского государственного экономического университета  
г. Ереван, Республика Армения*

Опираясь на наличие эффективной системы управления государственными расходами и необходимость снижения коррупционных рисков в бюджетном процессе, параллельно с отдельными реформами, осуществляемыми в сфере государственных финансов, с 2000 года власти Республики Армения инициировали внедрение единой системы закупок в государственном секторе, соответствующей международным стандартам.

Для более целенаправленного осуществления процесса государственных закупок в РА в соответствии с Законом РА «О закупках» установлены специальные процедуры закупок для приобретения различных видов товаров, работ и услуг.

Цель данной статьи – изучить процедуры государственных закупок в РА используя данные международного опыта, выделить преимущества процедур закупок, используемых в развитых странах. Задачей работы является проведение сравнительного анализа между различными процедурами государственных закупок в РА, выявить их преимущества и недостатки, сравнив их с другими странами, в частности, с ГДР, и с процедурами государственных закупок, используемыми в США.

Для решения проблем, рассматриваемых в статье, были использованы вертикальный и сравнительный методы анализа для сравнения процедур закупок, используемых в РА и зарубежных странах, а также для выявления преимуществ и недостатков различных процедур в РА.

Обобщая исследования, проведенные в статье, следует отметить, что выбор процедуры закупки оказывает непосредственное влияние на прозрачность осуществления процесса государственных закупок и эффективное использование средств государственного бюджета.

**Ключевые слова:** *государственные закупки, процедуры, РА, США, ГДР, открытый и закрытый конкурс, электронный аукцион, процедура переговоров.*